

Պատի՛ւ ձեզի:
Դաժան մամբուն մէջ կեանքին,
Դուք անանուն հերոսներ.
Միշտ կը կերտէ՛ք, աստուածօրէն միայնակ,
Հանապազօր հացն օրհնեալ
Ուրիշներու սեղանին՝
Ամէն օր ձեր կեանքէն մաս մը քաղելով
Ակօսներուն մէջ լայնշի.
Բայց ըսէ՛ք,
Ո՞վ պիտի գար կշռել ձեր վիշտն ու դրնէր
Դափնի մը ձեր մակատներուն,
Զոր կ'օծէ
Կոյս առաւօտը միայն՝
Մարգրիտովն իր ցօղերուն...:

Այսպէս կ'անցնիք անաղմուկ,
Դուք մոռցրած հերոսներ,
Անփառունակ եւ յանալս
Զրկուած ձեր իսկ քրտինքի
Խունկով շաղուած սուրբ հացէն.
Որովհետեւ սուր չունիք
Ու ձեր անցած ուղիներէն չի հոսիր
Արիւնը ձեր եղբայրներուն, այլ գինով
Կ'երգէ արտայտը միայն՝
Զեր տաժանքը մեղմելով...:
Ու ես գիտեմ
Որ պատմութիւնն ոսկետառ
Զեզի համար երբեք, երբեք չի բանար
Էջ մը պատուի դարէ դար...
Ուստի այսօր, ո՛վ անձնուրաց եղբայրներ,
Ներեցէ՛ք ինձ որ գամ ձեզի ես ձօնել
Իմ այս երգը նմիքի...:

1915 Մայիս 1, Չանդըրի

(Շանթ, 1919, էջ 429)

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

Արիս Իսրայէլեան բանաստեղծին նա-
հատակակից, եւ անոր գաղտնիք՝ Մու-
րատ-Ռափայէլեան վարժարանի մէջ 1899
-1901ի շրջանին, հրաշունչ գործիչ ու դը-
րե՛հ, Բարսեղ Շահպաղ ծնած է Պոլիս
1883ին:

Հ. Սիմոն Երեմեանի վկայութեան հա-
մաձայն, Մուրատ-Ռափայէլեանի աշա-
կերտութեան օրերէն իսկ կը յայտնէր իր
արտակարգ առաջնորդողի խանդոտ հոգին
եւ համարուած էր վարժարանին ամէնէն
տաղանդաւոր ու տիպար աշակերտներէն
մէկը*:

Պոլիս վերադարձին, չունէր կ'առնէ հայ
խմբադրաստուներու մէջ եւ ուշադրաւ կը
հանդիսանայ իր կրակոտ ու զեղոճ յօդ-
ուածներով: Միքայէլ Շամտանճեանի հետ
կ'աշխատակցի «Ծաղիկ» դրական թեր-
թին:

1901ին, Օրմանեան Պատրիարքի վրայ
կատարուած մահափորձի ժամանակ, խոյս
կու տայ Եզրիպոս: Աղեքսանդրիա հա-
տառուէ՛ք ետք, բոցաշունչ յօդուածնե-
րով լեցուն կը հրատարակէ «Կրակ» շա-
բաթաթերթը, 1906ին, Երուանդ Օտեանի
հետ: 1908ին կը հրատարակէ «Մտքակ»
երկշաբաթաթերթը: Այդ շրջանին լոյս կը
տեսնեն «Այլասիրութիւն եւ Եսասիրու-
թիւն» (տպ. Աղեքսանդրիա 1907ին, էջ
49), բանախօսութիւն մը արտասանուած
Ժընեւի մէջ 1907ի Մարտ 23ին, ինչպէս
նաեւ «Հաջիւններ» հատորիկները:

Ամուսնութենէն ետք կը հաստատուի
Փարիզ, 1911ին, ուր կը սորվի իրաւա-
բանութիւն: Մ. վարանդեանի հետ կը
խմբագրէ «Pro Armenia» Փրանսերէն
թերթը. միեւնոյն ատեն կ'աշխատակցի
«Ազատամարտ», «Հայրենիք», «Հորիզոն»
թերթերուն:



Բարսեղ Շահպաղ Մուրատ-Ռափ.ի
աշակերտութեան օրերուն

Փաստաբանութեան վկայականն ընդու-
նելու վրայ, տարադրութիւններու նախօ-
րեակին, Պոլիս կ'անցնի յատուկ պաշտօ-
նով, յանձնարարութեամբ վիճակորդ Պե-
րարի: Գաւառին մէջ ալ իր կրակոտ բա-
նախօսութիւններով մեծ ժողովրդակա-
նութիւն կը շահի:

Փոթորիկը պայթած էր. մեռելներու
կարաւանին մէջ զինքն ալ կը նետեն: Զար-
դարարները զինք վար կը դնեն տարադը-
րեալներու խումբէն, Սերառտիոյ մօտ,
ըստ Հ. Սիմոն Երեմեանի, եւ կը զլխատեն
այն քարին վրայ՝ ուրկէ երեք տարի առաջ
հրաշունչ բանախօսութիւններ կատարած
էր:

Իր մահով ազգը կը կորսնցնէր իրաւա-
դէտ, ընկերարան դրող մը եւ առաջնորդ
մը հանրային կեանքին:

(*) Հմմտ. «Բագմավէպ» 1936, էջ 279:

Պարբերական կոտորած էն հրաշքով վերապրող երկրաստորդ մը, Պ. Վահէ Հայկ՝ հետեւեալը կը հաղորդէ Թէոփիկին, 1920ի «Տարեցոյց»ին խմբագրութեան պահուն, Շահապի եղբորական վախճանին մասին. (1916-1920, էջ 60-61):

Ջարդէն 8 օր ետք, Տիարպէքերի կողմէ Բարսեղ կը բերուի Մեղրէի կեդրոնական բանտը, ուրկէ քիչ առաջ հաղարաւորներ չարուն չարան տարուեր էին անվերադարձ: Բանտին տնօրէնը Հասան կը շորթէ անոր ժամացոյցն ու դրամը, աղատելու պայմանագրական խոստումներով: Շարաթ մը անօթի եւ փերիչան, ծեծով համեմուած, կը մնայ այդ քարաւանը, մահուան երթալէ առաջ:

Օր մըն ալ լուր կը տրուի որ պատրաստ ըլլայ «տիվանը Էօփի»ի հարցաքննութեան: Պաւար գիշեր: Քանի մը ժանտարմա կը հանեն զինք բանտէն դուրս եւ քիչ մը հեռուն, «փայրիք»ին պատերուն տակ կը սպաննեն:

Հ. Ն.

ԲԱՐՍԵՂ ԵԱՀՊԱԶ

Կեանքներ կան, որոնք հանդարտ եւ անգործը զնացք մը ունեցեր են միշտ իրենց գոյութեան ամբողջ շրջանին: Կան կեանքեր ալ որոնց զնացքը եղեր է միշտ պայքարով, շարժումով, եռանդով, ելեւէջներով լեցուն:

Բարսեղ Շահապի կեանքն ու նկարագիրը այս վերջիններէն է եղած: Չի սիրեր ան երբեք հարթ եւ ուղիղ ճամբաներու հանդիստ ու անխոչընդոտ զնացքը, չի սիրեր տափաղութիւնը եւ անդորրութիւնը հասարակ միջակութիւններու, այլ եղեր է միշտ ախորժողը բոլոր դժուարութիւններուն, բոլոր դժուարամատոյց բարձրութիւններուն:

Քանի էր անիկա հաճոյքը պայքարին մէջ: Ապրելու երանութիւնը՝ մշտակայ շարժումի եւ գործունէութեան մէջ: Վարձատրութիւնը՝ դժուարութեան մէջ:

Ծայրայեղօրէն խելացի եւ բոլոր խե-

լացիներուն պէս ամէն տարօրինակութեանց սիրահար այս տղան, որ եղեր էր իմ սիրելի բարեկամներէս եւ ընկերներէս մէկը իր փոթորկոտ կեանքին պէս նոյնքան փոթորկոտ մահ մը ունեցաւ:

Սովորական, հասարակ մարդերու պէս չմեռաւ ան, ընկալեալ ձեւերով՝ իր տան անկիւնը, հանդիստ անկողին մէջ, իր սրբելիներովը շրջապատուած:

Ինչպէս պարտականութեան ճամբուն վերայ, - ինչպէս իր միւս գաղափարակիցները, - որ կ'առաջնորդէր զինքը դէպի մեծ խտային:

* * *

Դեռ աչքին առջեւն է իր սիրուն գէմբը: Իր չէնշող, կրակոտ խօսակցութիւնը, միշտ հաւատքով լեցուն ապագայի մասին, իր եռանդին ջերմութեամբը կը տաքցնէր իմ սկեպտիկի սառնացած հոգին:

Շուրջ քսան տարի առաջ Կեդրոնականի դրասեղաններուն վրայ ծանօթացած էինք իրարու: Անկէց ետք կեանքի ու ճակատագրի փոթորիկները դատած էին մեզ իրարմէ: 1901ին զգուած այլեւս Պոլսոյ հայահալած հետապնդումներէն, երբ Աղեքսանդրիա ոտք կոխեցի, հոն իմացայ որ խորասանձեաններու, պելժիական հակայ երկաթի ընկերութեան մը գրասենեակի պէտ էր նշանակուած:

Գացի զինքը տեսնելու: Որչափ փոխուած դտայ բաղդատմամբ իր Պոլսոյ կեանքին: Իր հսկողութեան ու տնօրէնութեան տակ կ'աշխատէին խումբ մը պաշտօնեաներ եւ ինք նստած էր խոշոր եւ թուղթերով բեռնաւորուած գրասենեակին առջեւ: Չբաղած էր վաճառականի մը հետ կարգադրելու առեւտուրի հրապարակաւ գործ մը:

Ծայրայեղօրէն ընկերասէր ու բարեկամասէր բնաւորութիւն, երբ զիս տեսաւ իր սենեակին դրան առջեւ՝ զլխարկը ձեռքը եւ քիչ մը քաշուելով, որ արդէն չըլլամ իր գործին, յանկարծ կտրեց իր խօսքը, ելաւ իր տեղէն եւ ուղղակի խոյանալով զրկեց զիս ու համբուրուեցանք երկար, կարօտի քաղցր համբոյրներով:

Ու ներողութիւն խնդրելով վաճառականէն, առաւ նստեցուց զիս քովիկը:

Կէս ժամու չափ դեռ տեւեց սակարկութիւնը վաճառականին հետ. կատարեալ համաձայնութիւն գոյանալէն ետք յիշեալը մեկնեցաւ:

— Է՛, բարի եկար Լեւոն, ըսաւ ինծի եղբօր մը պէս շոյելով երեսներս:

Ու երկարօրէն ինծի պատմեց իր կեանքը:

Եկեր էր Եգիպտոս առանց որեւէ նիւթական կարողութեան, եւ միայն իր կարողութեան վրայ վստահած: Երեք տարի շարունակ երկաթագործութիւն էր ըրեր, երկաթին տեսակներն հասկնալու, անոր ո՛ր տեսակը ինչ գործի յարմարիւր ուսումնասիրելու համար:

Անկէց ետք անցեր էր Աղեքսանդրիա երկաթի ամենամեծ պելժ վաճառականահան ընկերութեան մէջ, որուն գլխաւոր վարիչն ու բաժնետէրերէն մէկն էր իր մօրեղբայրը, խորասանձեան: Մէկ քանի տարուան մէջ դարձեր էր գրասենեակի պէտ եւ ընկերութեան վարիչ:

Հակառակ իր նիւթական նախանձելի վիճակին, Շահապ չէր քաշուած երբեք վիճակին, Շահապ չէր քաշուած երբեք հանրային գործերէ եւ բոլորանուէր տրուած էր ինքզինքը կուսակցութեան յայտունի կամ գաղտնի գործերուն: Կուսակցութեան փրփրակաւոր, ենթակոմիտէներու եւ կոմիտէներու կազմութիւն, ճառ, ներու եւ կոմիտէներու կազմութիւն, ամէն օրուան հրապարակախօսութիւն, ամէն օրուան զրազումները դարձեր էին: Կը դարձնաւ մի որ ինչպէս կարելի կ'ըլլար ժամանակ չտնել աչքան բաղդադրող գործունէութեան մը համար:

* * *

Քանի մը շարաթ իր քով մնալէ ետք զործով վերադարձայ Գահիրէ:

Հոն շուրջ երկու տարուան իմ աստանդական կեանքիս մէջ շատ անգամ կը ստանայի իր նամակները, որոնց մէջ կը հասնէր թէ ան ձանձրացեր էր վաճառականի տափակ կեանքէն:

«Բոլորովին զգուած եմ այլեւս, կը դըժէր իր նամակներէն մէկուն մէջ, այս վա-

ճառականի տափակ, հասարակ տեղիք կեանքէս: Ինծի համար աւելի լայն հորիզոններ պէտք են, հանրային գործունէութեան աւելի ընդարձակ դաշտեր, վաղք մը բոլոր խտային գեղեցկութեանց ետեւէն: Պիտի երթամ Փարիզ՝ իրաւագիտութիւն ուսանելու եւ ասանկով աւելի անձն-իշխանօրէն նուիրուելու իմ խտայնեցող իրադրո՞ւմին, նուիրուելու հանրային գործունէութեան, եւ իմ ցեղիս ազատագրումին, որուն այնքան կ'աշխատի իմ կուսակցութեանս մէջ մի անգամը»:

Երկու տարի ետքն էր, որ Սահմանագրութիւնը կը հռչակուէր Պոլսոյ մէջ եւ ես ու ինծի պէս շատեր, որոնց մէջ էր Սրմաքէշխանեան, Թէքէեան, եւ ուրիշներ, յուսալով որ վերջապէս հանգստութիւնը պիտի տրէր թուրքիոյ մէջ եւ արդարութեան արեւը հաւասարապէս պիտի փայլէր թուրքիա բնակող ցեղերուն եւ մասնաւորաբար հայ ազգին վերեւ, ճամբայ ինչպէս Աղեքսանդրիա, վերադառնալու համար Պոլիս:

Աղեքսանդրիոյ մէջ Շահապին խանդավառութիւնն աննկարագրելի էր, հոս ու հոն հրապարակախօսութիւններ, հոս միթիւնկ, հոն ժողով, եւ ամէն ատեն ու ամէն տեղ թուրք եւ հայ համերաշխութիւն:

Անոր պէս մենք ալ խանդավառուած էինք այն ատեն:

Բարսեղ իր անկեղծ ժպտն ու խօսքը կը պատցնէր միթիւնկներու մէջ, որոնց հոգին էր ինք:

Ես մնացի Աղեքսանդրիա քանի մը շարաթ եւս եւ եկայ Պոլիս, բաժնուելով Բարսեղէն:

Քանի մը տարիներ ետքն էր, որ օր մը յանկարծ լսեցի թէ Բարսեղ Պոլիս եկեր է:

Ան մնացեր էր Աղեքսանդրիա իմ բաժանումէս ետք տարի մըն ալ, յետոյ անցեր էր Փարիզ՝ իրաւագիտութիւն ուսանելու եւ ամուսնացեր ու պղտիկ պէպէքի մըն ալ հայր դարձեր: Տարի մը միայն մնացեր էր իր ընթացքը լրացնելու՝ երբ համաշխարհային պատերազմը կը ծագէ եւ իրեն անկարելի կը դառնայ այլեւս մնալ Փարիզի մէջ: Ընտանիքով վերադարձաւ Պոլիս: